

2904

469

86
7-32

79

~~2050~~

4696c

2011

2003

86
7-32

Մ

ՀՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԹՅ

Հ 9 20

Վ Ե Պ Ի Կ

ՏԻԿԻՆ ԷՄԻԼԻ ՊԱՐԴՈ ԲԱՍԱՆԻ Տօքուն

Թարգմանեց Ռուսերենից

ՑՈՎՀԱՆՆԵԼ ՀԱԶԱՐԻԹԵԱՆ



Վ Ե Պ Ի Ը Պ Ա Տ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ Ս. ԷԶՄԻԱՑՆԻ

1899

25803-Կ.Հ.

Հ



ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄՆ.

Մարտ ամսի առաւտօտեան սաստիկ ցուրտը մինչև մարդու ոսկորներն էր ներս թափանցում և Մարինեյդ քաղաքի հասարակաց լուացարանում սպիտակեղէն լուանող կանայք ցրտից սառած ամենախղճալի տեսք ունէին։ Բայց ամենից թշուառ երեսում էր օրավարձով բանող Անտօնիեյն։ * Գործը նորա ձեռքում կարծես չէր շարժւում, նայածախակի կանգնում էր գաղարեցնելով լուանալը, և կամացուկ սրբում էր կարմրացած աչքերից ոչ թէ ջրի կաթիլ կամ սապոնի փրփուր, այլ արտասուբի խոշոր կաթիլներ, որոնք փայլում էին նորա թորշումած դեմքի վերայ։

Անտօնիեյի ընկերուհիները կարեկցութեամբ նայում էին գունատ կնոջը, և ամեն մի կողմանակի վիճարանութեան և գատողութեան մէջ յաճախակի ձգում էին դէպի նա զանա-

Дозволено цензурою 19 Мая 1899 г. Г. Тифлисъ.

5357-56



* Պէտքէ գըել Անտօնեայ։

զան տեսակ նկատողութիւններ, հաղորդելով
իրար մէջ մի ինչ որ բան, որի առիթով անպատ-
ճառ բացականչում են, սարսափած, գժգոհու-
թեամբ և կարեկցութեամբ։ Ամբոյջ լուացա-
րանը բերան դիտեր նորա թշուառութիւնը
և այդ հարեանների անվերջ խօսակցու-
թեան նիւթեր էր կազմում։

Ամենքին լու յայտնի էր, որ թշուառը
մի քանի տարի առաջ ամուսնանալով մատ-
գործի հետ տեղափոխուեցաւ քաղաքի թա-
ղերից մէկը, մարդու և իւր պառաւ մօր
հետ միասին. և ողջ ընտանիքը ապրում էր
իւր համար, կարիք չ'զգալով, շնորհիւ Ան-
տօնիկի անխոնջ աշխատութեան, և այն մաս-
նաւոր դրամազլիսով որ յետ էր ձգել պառա-
ւը, երկար ժամանակ զբաղուելով հնոախա-
վաճառութեամբ և վաշխառութեամբ։ Դեռ
մինչեւ այժմ բոլորը յիշում են այն սարսա-
փելի դիշերը, երբ պառաւին գտան սպա-
նած, իսկ արիզը, որի մէջ պահում էր փո-
ղերը և մասնաւոր զանազան ոսկեղէն իրերը՝
ջարդու փշուր էր արուած։ Բայց գեռ կեն-
դանի պահուած է ամենի յիշողութեան մէջ,
թէ ի՞նչ սարսափ զարթեցրեց տեղացիների

մէջ այն լուրը, որ մարդասպանը և կողոպ-
տողը, ուրիշ ոչոք չէ, բայց եթէ Անտօնիկի
ամսուսինը թշուառ կինը այս բանը ինքը հաս-
տաեց, աւելացնելով որ չարագործը վա-
զուց աչք ուներ իւր զօքանչի փողերին։

Ճիշտ է, նորան յաջողուեց մի կերպ
երկու—երեք զինետան ընկերների օգնու-
թեամբ տպացուցանել իւր անմեղութիւնը
«ալիրի» և գործը փոխուեց այնպէս, որ փո-
խանակ կախաղան հանելու, չարագործին
վճռեցին քսան տարուայ խիստ բանատրգե-
լութեան։ Բայց հասարակաց կարծիքը դէպի
նա վերաբերուեց ոչ այնքան ներողամտու-
թեամբ, ինչպէս օրէնքը։ Նորա հարազատ կնոջ
վկայութեան հետ միասին, կար և մի ոչ պա-
կաս յարգելի հանգտմանք, այսինքն սպանու-
թեան գործածած ձեր—մի սարսափելի հա-
րուածով պառաւին վերեկց ներքեւ կէս ա-
րած, իսկ և իսկ այնպէս՝ ինչպէս մսագործը
ձեղքումէ խողին նոյնալիսի լայն և սուր գա-
նակով։

Հայրենի քաղաքում մի բոպէ անգամ
չէին կասկածում որ նորա տեղը կախաղանն
է, իսկ Անտօնիկի բաղդը սկսեց դէպի ա-

մենքը ներգործել, մի տեսակ սրբազան երշ
կիւղածութիւն, երբ յայտնուեց, որ մարդը
երգուել է, երբ իրան ազատ թողնեն, նորա
հետ էլ գործը կվերջացնի, նորա համար որ իր
դեմ հակառակ ցուցմունք տուեց:

Երբ մարդուն տարան, գժբախտ կինը
յղի էր, և մնաք բարեկի ժամանակ մարդաս-
պանը յայտնեց նորան, որ անպատճառ հէնց
որ վերադառնայ նորան հանդերձեալ աշխարհ
կուղարկի:

Երբ Անտօնիէ յին տղայ ծնուեց, նա
կոկից մինչ այն աստիճան թուլացել և տան-
ջուել էր, որ չկարողարաւ ինքը կերակրել
երեխային և որովհետեւ ծծմայր չէր կարող
փարձել ուստի նորան վերցրին կերակրելու
հերթով հարեաններից նոքա, որոնք ծծի ե-
րեխայ ունէին: Մօր յուզմունքները աղջել
էին երեխայի վերայ. նա մեծացաւ թոյլ և հի-
ւանդուա: Հազիւ թէ Անտօնիէ յին առողջացել
էր, նա նորից ջանասիրութեամբ գործի ձեռ-
նարկեց և շուտով ընդունեց իւր սովորական
տեսքը, խորասուզուեց իւր խաղաղ և ծանր
կեանքի մէջ. միայն նորա դէմքը պահպանեց
այն առանձին կապտագոյն գունատութիւնը,

որը սրտամաշ ցաւով տանջւողների յատկա-
նիշն է: Քսան տարի բանդում քսան տա-
րուայ մէջ միթէ քիչ բան կարող է պատա-
հել! մտածում էր նա ինքն իրեն: Գուցէ շատ
կարելի է, նա մինչեւ այդ ժամանակ կ'մեռնի,
և գուցէ հէնց ես ինքս մինչեւ այդ ժամա-
նակ չեմ ապրիլ: Դեռ քանի քանի ջրեր
կ'հոսեն մինչեւ այդ ժամանակ: Իւր մահովը
մեռնել, նա չէր վախենում բայց այն միտ-
քը՝ թէ մարդը կարող է վերադառնալ,
նորան տիրում էր անվարատելի սարսափ:
Հարեանները ինամքով միմիթարում էին նո-
րա սրտամաշ ցաւը, ակնարկելով, որ չարա-
գործը վերջապէս կարող է զղալ, կվերա-
դառնայ ուղիղ ձանապարհի վերայ: Անտօնի-
է յին միայն շարժում էր գլուխը և տիրու-
թեամբ պնդում էր:

— Նա, ուղիղ ձանապարհի վերայ:
Միթէ ինքը Տէրը պիտի իջնի երկնքից և
հանի նորա չար սիրաը կուրծքից, դնելով
նորա տեղ ուրիշը:

Եւ հէնց որ նոքա խօսում էին չարագոր-
ծի մասին, նա սառսուռ էր զգում:

Ինչ էլ կուզես ասիր, միայն քսան տա-

քին քիչ ժամանակ չէ, իսկ ժամանակը միշտ-
թարում է ամեն վիշտ, որքան էլ որ նա
ծանր լինի: Երբեմն Անտօնիկյան արդէն թը-
ռում էր, թէ այս բոլորը, ինչ որ տեսել էր
նա երազումն էր տեսած. Երբեմն մտածում
էր, որ չարագործին կուլ տուող բանքը ընդ-
միշտ կողպուեց նորա քամակից: Վերջապէս
եթէ օրէնքը կարողացաւ պատճել, առաջին
յանցանքը, հաւանական է, որ նա կարող է
երկրորդի առաջն էլ տռնել: Օրէնքը!—այդ
բարյական ոյժ է, որի մասին Անտօնիկյի
գլխում կուտակված էր մի ինչ որ խռոր,
խորհրդաւոր պատկերացումն. նորան թւում
էր մի ինչ որ սարսափելի, բայց երկաթէ
ունելիք, որը ընդունակէ բռնել նորան ան-
դունդի եղերքից:

Եւ կամաց, կամաց նորա անվերջ երկիւղին
սկսեց խառնուել մի ինչոր յուսոյ նշաններ, որը
սակայն կայանում էր միայն նորանումն որ
ժամանակը միշտ անցնելով անցնում է, և
դեռ էլ շատ մասը մնում է նորա առաջեր:
Ինչպէս տարօրինակ են դասաւորվում աշ-
խարհիս վերայ հանգամանքները: Ի հարկէ
երբոր թագաւորը կանգնած է բեմի առաջ,

իւր թագուհու հետ, նորա մտքով անգամ
չէր կարող անցնել, որ այս փառաւոր գէպ-
քը կարող է այնքան տանջանք պատճառել,
մի գաւառական խեղճ քաղաքում անյայտ,
օրավարձով բանող թշուառ կնոջը:

Երբ Անտօնիկյն իմացաւ, որ իւր մար-
դը ընկել է ընդհանրական ներման մէջ,
նա ոչ մի խօսք չարտասանեց: Հարեւանները
նորան տեսան դռան շեմքի վերայ, նա նըս-
տած էր ձեռքերը ծալած, և զիսիկոր, իսկ
նորա փոքրիկ տղան գարձնելով գէպի մայրը
իւր հիւանդու տիուր հայուածքը տիրագին
ձչում էր:

—Մայրիկ! տաքայրու կերակուրը, մայ-
րիկ! քաղցած եմ!: Հարեւանների շատախոս
և կարեկցող խումբը շրջապատեց նորան՝
Անտօնեային:

Մինը հարեւաններից յանձն առաւ կե-
րակրել երեխային, միւսը սկսեց մլոխթարել
մօրը, «բան է գտել տանջուելու յիմարը!: Սուրբ
մայր Աստուածածին!: Միթէ նա հէնց գա-
լուն պէս կսպանէ սորան: Ապա կառավա-
րութիւնը էլ ինչի համար է: Փառք Աստու-
ծոյ, աշխարհիս վերայ դատարան կայ, կարե-

լի է զիմել կառավարութեանը, ոստիկանութեանը ապաւինել:

ԷՇ ի՞նչ գատարան, վրայ բերեց Անտօնիէյն նուազած ձայնով, նայելով իւր զիմացը սառած աչքերով:—Հաւ չի լինիլ, հէնց ուղղակի նահանդագիտին կամ փոխարքային դիմել, անպատճառ պէտք է գնալ. մի փաստաբանի մօտ իմանալ թէ ի՞նչ է գրուած օրէնքի մէջ այսպիսի գէպքերում.

Մի բարի կին, որ ամուսնացած էր ոստիկանի վերայ, առաջարկեց, որ իւր ամուսինը կուղարկի շարագրութին վախեցնելու. մի ուրիշ թխարէմ պառաւ յանձն առաւ, որ ամեն երեկոյ գայ գիշերելու նորա մօտ. այնպէս կարեկցեցին նորան, որ Անտօնիէյն քաջալերուեց, վճռեց մի բան անել, և հէնց այնտեղ և իսկ որոշեց զիմել մի փաստաբանի. մի բան իմանալու համար:

Երբ նա տուն վերագարձաւ, այդ այցելութիւնից յետոյ, նորա առաջ ամեն կողմից դուրս թափուեցին հարեանները, շտապելով իմանալ նորա այցելութեան հետեանքը և գժգոհութեան աղաղակներ արձակեցին ամեն կողմից: Օրէնքը փոխանակ հոփանավո-

րելու, ստիպում էր զոհի հարազատ աղջկան, մարդասպանի հետ միասին մի հարկի տակ ապրել և նորա հետ մնալ իրեւ ամուսին:

—Տէր Ամենակալ այ քեզ օրէնք. և ինչպիսի մարզիկ են նորան հնարել: Թողոք նոքա իրենք փորձէին թէ այս ինչ համբերութիւն է, աղաղակում էր գժգոհ խումբը: Այ ուրեմն այդպէս և չէ կարելի ոչինչ անել:

—Ինչու չէ կարելի է կարելի նասում է, որ բոլորովին կարելի է հեռանալ, միայն հարկաւոր է առաջուց ապահարզան ստանալ:

—Էլ ի՞նչ ապահարզան:

Իսկ այսպէս գատը քննութեան է կարօտ: Հարեանների ձեռքերը թուլացան. ուղղակի յայտնի բան է, թէ ինչչ գատը: Կակսեագատուել, էլ գորան վերջ չ'կայ, իոկ երբ վերջը գալիս է, այդ աւելի վատ է, որովհետեւ մեղաւորուածները միշտ մնում են խեղճ և անբախտ:

—Իսկ որպէս զի ապահարզան ստանամ: Ես զեռ պարտաւոր եմ ապացուցանել, որ մարդս ինձ հետ վատ է վարփում. աւելացրեց Անտօնիէյն:

Հենց այդ էր պակաս: Ախր միթէ՞ այս
հրէշը չէր, որ սպանեց սորա հարազատ
մօրը, էլ նորանից ինչպիսի վատ վարմունք է,
հարկաւոր: Կարծեմ անշուշտ և այդ էլ բա-
ւական է, չե որ ամբողջ քաղաքին յայտնի
է, որ նա խոստացաւ սորան ևս սպանել:

— Ախր այդ ով լսեց!.... պէտք է ա-
սած եղած ամենախսկական փաստերը: Այս-
աեղ բարձրացաւ կատարեալ խառնակութիւն!
Վինչե անգամ դանուեցին այնպիսիները, ո-
րոնք յայտարարեցին, որ նոքա թուղթ կը-
պրեն թագաւորին իրեն անձամբ և կ'ինդ-
րեն, որպէս զի նա փոխի ընդհանրական նե-
րումը: Եւ այդ օրուանից հարետները սկսե-
ցին հերթով գիշերել Անտօնիայի մօտ, որպէս
զի գժբաղտ կինը շատ չ'վախենայ և կարո-
ղանայ զոնէ հանգիստ քնել: Բարեբախտա-
բար երրորդ օրը լուր եկաւ, որ ընդհանրա-
կան ներումը դուրս է եկել ոչ լիակատար,
և որ չարագործին միայն կրծատել են պատ-
ժի ժամանակը, այնպէս որ նորան դեռ մը-
նում էր մի քանի տարիներ էլ կապանքի
մէջ մնալ, այստեղ միայն Անտօնիէյն կարո-
ղացաւ առաջին անգամ խաղաղ գիշեր անց-

կացնել չ'վերթուչելով անկողնուց և օդնու-
թեան չ'կանչեց հարեաններին:

Այս առաջին վրդովմունքից յետոյ ան-
ցաւ մի ամբողջ տարի և Անտօնիէյն վերջ-
նականապէս հանգստացաւ, խորասուզուելով՝
իւր համեստ պարապմունքի մէջ, բայց մի
գեղեցիկ օր, այն տան ծառաներից մինը,
որտեղ բնակւում էր Անտօնիէյն, մտածելով
ուրախացնել թշուառ կնոջը, որի մարդը բան-
դում նստած էր, հազորդեց նորան, որ թա-
գուհին շուտով պիտի ազատուի և այս դէպ-
քի համար արդէն հաւանական է, որ կհրա-
տարակուի լիակատար ընդհանրական ներումն:

Անտօնիէյն սենեակի յատակն էր լուա-
նում՝ լսելով ուրախալի լուրը, նա շպրտեց
փալատը, բաց թողեց փեշերը և մեքենայաբար
հեռացաւ, լուռ և սառնութեամբ արձանի
նման:

Մինչգեռ նա անցնում էր փողոցով, ի-
րեն ուղղած բոլոր հարցերին նա պատաս-
խանում էր, որ տկար է, չնայելով որ ոչինչ
չէր զգում բացի սաստիկ թուլութիւնից
միանգամայն չէր կարողանում ոչ մի բանի
ձեռնարկել: Սոյն օրը երբ թագուհին ազատ-

ուեց, Անտօնիէյն սկսեց համարել թնդանօթի արձակումները, զգալով որ ամեն մի հարուածը կարծես խփում էր նորա գլխին: Իսկ երբ որ ասացին նորան թէ թագուհու նորածին երեխան—աղջիկ է, և նա սկսեց յուսալ որ բարձրագոյն շնորհումը քիչ կ'լինի, քան ժառանգի ծննդեան դէպքում: Ե հէնց ասենք թէ էլի դարձեալ ընդհանրական ներում կլինի, ինչո՞ւ համար այդ անպատճառ նորա մարդու վերայ պէտք է ընկնի: Ալսր չէ որ նորա պատիժը արդէն թեթեացրել են, իսկ ընդհակառակը նորա յանցանքը այնքան սարսափելի է. որ սպանել է անպաշտպան պառաւին, որը նորան ոչինչ չէր արել: Եւ այս ամենը ինչո՞ւ համար, մի քանի չարաբատիկ ոսկիների համար: Սորա առաջ կենդանի պատկերացաւ սարսափելի տեսարանը և յիրաւի, մի՞թէ կարելի է ներել գազանին, որը չէր վախեցել հասցնել այսպիսի սարսափելի հարուած: Անտօնիէյն չէր կարողանում մոռանալ լայն բացուած վերքը սպիտակացած եղերքներով և արեան լիճը, որը կանգնել էր մահճակալի տակ.....

Նա կողպուեց իւր տան մէջ և ժամերով

չշարժուեց տեղիցը: Արդէն եթէ նորան վիճակուած է սպանուել լաւ չի՝ լինիլ ինքիրեն մեռնել.....

Այսպիսի ծանր մտածմունքից նորան միայն ուշի բերեց երեխայի խղճալի ձայնը:

—Մայրիկ, ուտել եմ ուզում: Քաղցած եմ մայրիկ այստեղ դռան քամակը մարդ է կանգնած:

Ովէ՞ մեզ մօտ գալիս:

Վերջապէս մի գեղեցիկ արեգակնային օր, առաւօտեան նա տեղից շարժուեց և վերցնելով կեղտոտ սպիտակեղէնների կապոցը ուղղուեց դէպի լուացարան: Հարեանների բոլոր սիրալիր հարցմունքներին նա հազիւ պատասխանում էր և նայում որպէս խելագար: Եւ ահա երբ նա արդէն բոլոր սպատակեղէնը լուացել ու հաւաքումէր տուն վերադառնալ, ահա ով որ բերեց լուացարան անսպասելի լուրը:

Արդեօք մի որեկիցէ բարեհոգի էր հնարել գիտմամբ նույա համար, կամ թէ այդ այն խորհրդաւոր շշունչներից մինն էր, որոնք բարձրանում են յայտնի չէ թէ որտեղից և տարածում են օդի մէջ ժողովրդոց և առան-

ձին մարդոց չարագուշակ սղատահարներին նախընթաց օրը:

Ինչ էլ որ լիներ, հենց որ լսեց այդ մասին Անտօնիեյն մեքենայաբար բռնեց սիրատը և չոր խուրձի նման զլորուեց խոնաւքարէ յատակի վերայ

—Երեի մարդը մեռել է հարցնում են անընդհատ նոր եկողները, առաջուց եկողներից:

—Շիշտ եմ ասում քեզ սիրելիս:

—Ես ինքս երեկ փողոցում լսեցի:

—Խոկ ես խանութում

—Ապա քեզ ով ասաց.

—Մարդս:

—Բայց նա որտեղից զիտէ:

—Գնդաղետի ծառայից

—Խոկ նա ինչպես զիտէր:

—Նորան պարուը ինքն էր ասել:


Էլ սորանից մեծ հեղինակութիւն, սուրանից յետոյ ոչ ոք էլ չկասկածեց և բոլորն էլ հաւատացին, որ լուրը լիովին հաւատովի է և խսկական: Զարագործը ընդհանրական ներումի նախընթաց օրն է մեռել պատժի ժամանակը վերջանալուց առաջ:

Անտօնիեյն ուշքի եկաւ այտերի վերայ եռեաց մի ինչ որ կարմրութեան նման մի բան և ալտասուքը հեղեղուեց նորա աչքերից: Նա լալիս էր ուրախութիւնից և ներկայ եղողներից ոչ ոքի մտքովն էլ չէր անցնում սորանով վրդովուել: Անտօնիային էլ նոյնպէս յայտաբարուած էր մի առանձին տեսակի ընդհանրական ներումն և նորա ուրախութիւնը լիովին բնական էր:

Այն օրուանից, երբ չարագործութիւնը կատարուել էր, նա բոլորովին սառածի նըման էր, և չէր կարողանում լաց լինել: Այժմս նորա սիրաը տաքացել էր և արտասուքը թափուում էր ազատութեամբ:

Վերջապէս նա շնչեց ամբողջ կուրծքով, ազատուելով իրան խեղդող ծանրութիւնից: Այս բոլորի մէջ այնպէս պարզ երկուում էր Աստուծոյ մատը, որ նորա մտքովն անգամ չէր անցնում թէ լուրը կարող է սուտ լինել:

Այդ երեկոյ Անտօնիեյն տուն վերագարձաւ սովորականից ուշ, որովհետեւ ինքը գնաց դպրոց տղայի յետելից: Նորա համար գնեց զանազան տեսակ բարձրականներ, որոց մասին փոքրիկ երեխան վաղուց մըրդէն երե-



ւակացում էր, և չշտապելով գնում էր նորա հետ փողոցներով, կանգնում էր խանութների ցոյցի համար դրած (выставка) բաների առաջ, քաղցածութիւն չէր զգում միմիայն նորա համար էր մտածում: թէ ինչպէս լաւ է ազատ օդ ծծել և զգալ թէ ապրում ես, որ կեանքը նորից դէպի քեզ է վերադառնում: նա գտնվում էր այնպիսի արբեցութեան մէջ, որ մինչև անգամ ուշ չդարձրեց այն բանի վերայ, թէ նորա սենեակի դուռը կողպած չէ:

Մինչեւ անգամ երեխայի ձեռքը բռնած, նա ներս մտաւ նեղ սենեակը, որը ծառաւ յում էր նորան սեղանատան, հիւրասենեակի և թէ խոհանոցի տեղ՝ և շատ զարմացաւ նկատելով, որ պատի լամպան արդէն վառած է: Այստեղ մի ինչ որ կասկածելի կերպարանք (Փիգуրա) նորա առաջ բարձրացաւ սեղանի վերայից, և այն աղաղակը, որը պատրաստ էր դուրս թռչել նորա շրմունքներից, սառած մնաց կոկորդում:

Այդ նա էր: Անտօնիէյն անշարժ կանգնած էր իւր տեղում, նայում էր և չէր տեսնում, չնայելով որ նորա չարագուշակ

պատկերը անդրադառնում էր նորա աչքերում: Մի քանի րոպէ նա քարի նման կանգնած էր, բռնած երեխային սառած ձեռքերով: Վերջապէս մարդը խօսեց:

— Ինչ՞ո, երեխ չէիր սպասում, ասաց նա կոպիտ, բայց հանգարտ, առանց որեւէ բարկութեան:

Այս խօսքերի ձայնից, որոնց մէջ նորան գեռ լսելի էր լինում անէծք և մահացու սպառնալիքներ, թշուառ կինը յանկարծ ուշքի եկաւ, սուր ճիչ արձակեց, զրկեց երեխային և դիմեց դէպի դուռը: Բայց մարդը նորա ձանապարհը արգելեց:

— Հա, հա, հա, հա, ուր հոգեակս աղաղակեց նա ծաղրով, բանտարկեալի լիլր շարժուածքով: — Ձլինի թէ ցանկանում ես այս ժամին անհանագոտացնել ամբողջ թաղը, հանգիստ, դէպի ինձ արի: Վերջին խօսքերը արտասանեց առանց որեւէ սպառնալիքների, բայց այնպիսի տօնով, որ Անտօնիայի արիւնը երակներում սառեց:

Այժմս նորա կարկամելը փոխուեց տենդային զրգուումի: Նորանում լիովին զարթնեց զիտակցութեան զգացմնունքը ինքնաւ-

պաշտպանութեան համար. նորա զլիսում
յանկարծ յղացաւ մի միտք, և նա երեխայի
ձեռքից բռնեց: Հայրը նորան երբէք չէր տե-
սած, ինչ էլ որ լինի, բայց դարձեալ նորա հայրն
է: Անտօնիէ յն մօտ բերեց գէպի նա տղային:

— Հա՞ այդ քո տղան է, փնփնթաց
բանտարկեալը: Նա լամզան մեխից հանեց և
մօտ բերեց երեխային: Երեխան աչքերը խփեց
շլացուցիչ լուսից, և ձեռքերով ծածկեց երեսը,
կարծես պաշտպանուում էր այդ անյայտ
հօրից, որի մասին ոչինչ չէր խօսուում: Կթէ
ոչ սարսափով և դատապարտութեամբ: Նա
ամուր կպաւ մօրը և մայրը ջղաճութեամբ
սեղմեց նորան, իւր քաթանի նման գունատ
կուրծքին:

— Ի՞նչ հաշմանդամ լակոտ է, փնփըն-
թաց հայրը լամզան տեղը քաշ անելով: —
Ինչու այդքան լղար է, կարծես սատանաները
ծծել են:

Բաց չմողնելով երեխան ձեռքից, Ան-
տօնիէ յն յենուեց պատին: Նա հազիւ ոտքի
վերայ կանգնում էր: Սենեակը նորա տռած
շարժքում էր և աչքերի առաջ կապոյտ կը-
րակներ էր ցայտում:

— Հը, այստեղ ուտելու ոչինչ բան չի
գանուիլ, ասաց մարդը: Անտօնիէ յն երեխան
նստեցրեց յատակի վերայ անկիւնում, և
չնայելով նա երկիւղից լաց էր լինում, մայրը
սկսեց սենեակի մէջ հոգս տանել և սեղանը
ծածկեց գողգոջուն ձեռքերով: Նա բերեց
հաց, շիշով գինի, դուրս հանեց վառարանից
թաւով ձուկը և սկսեց ջանասիրութեամբ
ծառայել իւր շար թշնամուն, յուսալով որ
սորանով նորա գումար կշարժի: Զարագործը
նստեց և սկսեց ագահաբար ուտելի անընդ-
հատ գինի խմելով: Անտօնիէ յն շարունակում
էր կանգնել, աչքը չհեռացներով նորա ա-
րեակէզ և ածիլած երեսից, որի վերայ բան-
տը դրոշմել էր իւր առանձին կնիքը:

Նա մի բաժակ էլ խմեց և Անտօնիէ յի
համար էլ լցրեց:

— Ես չեմ ցանկանում.... շշնչաց Ան-
տօնիէ յն: Լամզի լուսով նորան թուաց, որ
բաժակում ոչ թէ գինի է, այլ լերգացած
արիւն: Նա ինքը խմեց ուսերը վեր քաշելով
և պնակի վերայ նորից ձկներ զրեց, որոնք
ագահութեամբ կերաւ ձեռքերով և հացով էլ
բերանը սրբեց: Կինը նայում էր թէ ինչպէս

նա իւր քաղցածութիւնն էր յագեցնում, և
մի ինչ որ աղօտ յոյս յղացաւ նորա հոգու մէջ:

Շատ կարելի է, որ նա կը կշտանայ և կը
հեռանայ, իսկ նա քամակից բոլոր փականք-
ները կկողպի, և թէ նա կմտածի յետ դառ-
նալ, որպէս զի իրեն սպանի, նա կսկսի այն-
պէս գոռալ, որ հարեանները կլսեն: Մի բան
միայն, որ նա անկարող կլինի գոռալ: Նա
հազար, որպէս զի կոկորդը մաքրի: Իսկ մար-
դը հէնց որ կշտացաւ, դուրս հանեց սիգարը,
եղունդով ծայրը պոկեց, հանդարտութեամբ
կոցրեց լամպից և կսեց ծխել:

— Սուս! ո՞ւր ես գնում: գոշեց նա նկա-
տելով, որ կինը ծածուկ դէպի դուռը դիմեց:

— Գնում եմ երեխային պարկեցնեմ,
պատասխանեց նա, ինքն էլ չիմացաւ ի՞նչ
ասի, և դուրս եկաւ հարեան սենեակը երե-
խան ձեռքին:

Իհարկէ մարդասպանը չի համարձակուիլ
այնտեղ մանել: Միթէ նա այդքան քաջու-
թիւն կունենայ: Ախր այս այն սենեակն է,
ուր նա չարագործութիւնը կատարեց, նորա
մօր սենեակն է: Առաջ նոքա մարդու հետ միա-
սին քնում էին այդտեղ, միջապատի յետևում:

Բայց պառաւը մեռնելուց յետոյ, Ան-
տօնիէ յին կարիքը ստիպեց ծախել ամուսնա-
կան մահճակալը և այժմս նա քնում էր
հանգուցեալի մահճակալի վերայ: Երեակայե-
լով՝ որ ինքն ապահով է, սկսեց երեխայի
շուները հանել: Դուռը բացուեց և ներս մտաւ
շարագործը: Անտօնիէ յն տեսաւ, ինչպէս նա
ունքերի տակից չորս կողմը նայեց, իսկ յե-
տոյ հանգստութեամբ հանեց ոտքերը և շո-
րերը և վերջապէս պարկեց իւր զոհի մահ-
ճակալի վերայ: Անտօնիէ յին թուաց՝ թէ նա
տեսնում է երազում: Եթէ որ մարդը դուրս
քաշէր դանակը, գուցէ և այնքան շատ չփա-
խենար, որքան այս սարսափելի սառնարիւ-
նութիւնը տեսնելով: Իսկ նա հանգստա ձրգ-
ուեց անկողնու վերայ յօդնած մարդու նման,
որ առանձին բաւականութեամբ պարկում է
մաքուր և նոր աեղաշորի մէջ:

— Ի՞նչ ես կոճի նման կանգնել, գոռաց
նա կնոջ վերայ: — Դէհ պարկիր էլի:

— Ես քնել չեմ ցանկանում, մրմնջաց
նա ամբողջ մարմնով գոզդողալէն, այնպէս որ
ատամ ատամի էր կպչում:

— Ի՞նչպէս թէ չես քնում:

Զինի թէ ուզում ես ամբողջ դիշերը
պահապան կանգնես:

— Ոչինչ, կկանգնեմ, դու քնիր անհան-
գիստ մի լինիր: Ես մի կերպ . . . այստեղ . . .

մարդը կոպիտ կերպով հայհոյեց:

— Եղ ի՞նչ նորութիւն է, ինձնից վա-
խենում ես ինչե, կամ թէ զզուում ես
ինձանից:

Պարկիր այս բոպէիս, եթէ ոչ

Նա վերկացաւ և այնպէս գէմք ընդու-
նեց, որ կարծես այս բոպէիս դուրս կթռչի
անկողնից:

Բայց Անտօնիէյն արդէն հանւում էր
գերու հնազանդութեամբ: Նա տենդային
արագութեամբ պոկոտում էր իւր կոճակները
և տիսնկաները, բաց աներով իւրկան: Անկիւ-
տում կամացուկ հեկեկում էր երեխան

Նա էր, որ հարեւաններին զարթեցրեց
լուսադէմին, իւր յուսահատ աղադակներով:
Նոքա վաղեցին եկան և Անտօնիէյին դատն
անկողնու մէջ: Նա կարծես մեռած լինէր,
շուտափոյթ կանչուած բժիշկը ասաց, որ նա
զիեռ կենդանի է, և շտապեց արիւն առնել,
բայց ոչ մի կաթիլ արիւն դուրս չեկաւ:

Մի օրից յետոյ նա մեռաւ, ըստ երե-
ւոյթին իւր իսկական մահով, որովհետեւ նո-
րա մարմնի վերայ, ոչ մի վնասուած տեղ
չկար: Եթեխան հաւատացնում էր, որ ան-
ձանօթ մարդը, որը այստեղ գիշերեց, առա-
նօտեան զարթներով երկար կանչեց նորան,
բաց երբ տեսաւ, որ ոխնակ պատասխանում
թողեց խելագործութեան գործադրութեան

25n w\$

2904

2013

